ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-ԻՆ, ԺԱՄԸ 10:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԳՈՐԾԱԿԱՐԳԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

Մասնակցությամբ՝

- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝** **Արամ Հովհաննիսյանի**
- **Արմավիրի մարզպետի խորհրդական՝** **Բարսեղ Նիկողոսյանի**
- **Արմավիրի մարզպետի խորհրդական՝** **Երվանդ Խաչատրյանի**
- **Արմավիրի մարզպետի օգնական՝** **Մանվել Մելիքյանի**
- **Արմավիրի մարզպետի օգնական՝** **Նարեկ Խաչատրյանի**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ՝** **Տաթևիկ Մկրտչյանի**

Քննարկվեց՝

ՀՀ Արմավիրի մարզպետի մոտ 17.03.2025թ. կայացած գործակարգավարական խորհրդակցության ընթացքում մարզպետի կողմից տրված հանձնարարականների կատարման ընթացքը և մարզում առկա մի շարք հրատապ խնդիրներ:

- **ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեին ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից անշարժ գույքի հանձնման ուղղությամբ տարված աշխատանքների և արդյունքների վերաբերյալ տեղեկատվությամբ հանդես եկավ՝**

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ՝ Դավիթ Ավետիսյանը:

Նա զեկուցեց, որ ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեին չհանձնված թվով 7 դպրոցների հանձնման կապակցությամբ կատարվում է ամենօրյա աշխատանք /փաստաթղթերի ուսումնասիրություն, այցելություն դպրոց, քննարկումներ ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի աշխատակիցների հետ/ և արդյունքների մասին ներկայացրեց ներքոհիշյալ տեղեկանքը՝ աղյուսակի տեսքով:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեին չհանձնված ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների վերաբերյալ

	Անշարժ գույքի անվանումը	**Անշարժ գույքի հասցեն**	**Պետական գույքի կառավարման կոմիտեին չհանձնելու պատճառները**	**Անշարժ գույքի հետ կապված խնդիրների լուծման վերաբերյալ տարվող աշխատանքները**
1	«Արմավիրի Մովսես Սիլիկյանի անվան N6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ ք.Արմավիր Շահումյան 20	Դպրոցի տարածքում առկա է շինություն, որը ներկա պահին չի տնօրինվում դպրոցի կողմից	Միջոցներ են ձեռնարկվում դպրոցի կողմից գույքի տնօրինումն ապահովելու համար:
2	«Արմավիրի N 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ ք.Արմավիր Աբովյան 182	Դպրոցի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականնում առկա են հողամասի և շինությունների վերաբերյալ անհամապատասխանություններ	**Դպրոցի ճշտված վկայականը գրությամբ կներկայացվի Պետական գույքի կառավարման կոմիտե:**
3	«Հացիկի Ավետիս Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ,Արմավիր համայնք, գ. Հացիկ 1-ին փ., 26շ.	Դպրոցի տարածքում առկա են շինություններ, որը ներկա պահին չի տնօրինվում դպրոցի կողմից	Միջոցներ են ձեռնարկվում խնդրի լուծման վերաբերյալ:

4	«Լեռնամերձի հիմնական դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ, Խոյ խոշորացված համայնք գ. Լեռնամերձ Արագածի 26	Տարածքում առկա է ինքնակամ շինություն	Աշխատանքներ են տարվում ինքնակամ շինության օրինականացման համար:
5	«Վարդանաշենի Մ.Մինասյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ գ.Վարդանաշեն 1-ին փողոց,24 շենք	Կատարվել է նոր չափագրություն,որից հետո իրականացվելու է սեփականության իրավունքի գրանցման գործընթաց	**Հանձնարարվել է դպրոցի տնօրենին ներկայացնելու համապատասխան փաստաթղթեր հանձնման ընդունման գործընթացը կազմակերպելու համար :**
6	Արգինայի միջնակարգ դպրոց	Գ. Արգինա, Աբովյան 40	Բացակայում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը:	**Պետական գույքի կառավարման կոմիտե ուղարկվել է մարզպետի համապատասխան գրություն կառավարության որոշման նախագիծ շրջանառելու համար:**
7	Գեղակերտի միջնակարգ դպրոց	ՀՀ Արմավիրի մարզ Խոյ խոշորացված համայնք Գեղակերտ բնակավայր Մ.Մաշտոցի 22	Հարակից շինությունների սեփականատերերի կողմից որոշակի տարածքի զավթում,ինքնակամ շինությունների կառուցում	Միջոցներ են ձեռնարկվում ինքնակամ շինությունների քանդման և հետևանքների վերացման կապակցությամբ:

ՀՀ Արմավիրի մարզպետը, քննարկելով վերոնշյալ տեղեկատվությունը, ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ **Դավիթ Ավետիսյանին հանձնարարեց** շարունակել վերոնշյալ գործընթացների վերաբերյալ իրականացվող աշխատանքները և արդյունքները ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետի քննարկմանը:

- **ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված շենքերն ու շինությունները (տարածքները)՝ ներառյալ դրանց զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանը հանձնելու նպատակով ՀՀ Արմավիրի մարզպետի 2024 թվականի ապրիլի 5-ի «Աշխատանքային խումբ ստեղծելու մասին» ՈՄՈ/165-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ հանդես եկավ**

  ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Սոնյա Բուդաղյանը: Նա նշեց, որ ՀՀ Արմավիրի մարզպետի 2024 թվականի ապրիլի 5-ի «Աշխատանքային խումբ ստեղծելու մասին» ՈՄՈ/165-Ա որոշման մեջ փոփոխություններն արդեն կատարվել են և որոշմամբ հաստատված հավելվածում Արման Խաչատրյան ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական բառերը փոխարինվել են Մանվել Մելիքյան ՀՀ Արմավիրի մարզպետի օգնական բառերով և Գաբրիել Գևորգյան ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի Կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ բառերը փոխարինվել են Դավիթ Ավետիսյան ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ բառերով: Համապատասխան գրությունը և որոշումն ուղարկվել են ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտե:

- **ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի աշխատակիցների աշխատանքի հաճախելու, հաշվառման մատյանի կորստի հետ կապված փաստական հանգամանքների պարզաբանման, ինչպես նաև աշխատանքային կարգապահության ներքին կանոնների պահպանման հետ կապված հարցերի վերաբերյալ հանդես եկավ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանը: Նա նշեց, որ հաշվառման մատյանի կորստի փաստով նշանակվել է ծառայողական քննություն, որի իրականացման համար սահմանվել է 30 օրյա ժամկետ, որպեսզի համապատասխան եզրակացության հիման վրա որոշվի գործի հետագա ընթացքը: Կարգապահական վարույթը հանձնարարվել է աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Լիաննա Հարությունյանին: Բացի այդ, ՀՀ մարզպետի աշխատակազմի աշխատանքային կարգապահության ներքին կանոնների կիրառման պահանջով, գլխավոր քարտուղարի հրամանով հանձնարարվել է աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին վերահսկել և աշխատանքային ամենօրյա ռեժիմով, անձնական պատասխանատվությամբ ապահովել գործավարության կարգի պահանջների կատարումը, հակառակ դեպքում կարգազանց աշխատակիցների նկատմամբ ծառայողական քննության արդյունքում կկիրառվեն կարգապահական ներգործության միջոցներ:

- Խորհրդակցության ընթացում 2025թ ընթացքում իրականացվելիք Սուբվենցիոն ծրագրերի մասին տեղեկատվությամբ հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Լիլիթ Մուշեղյանը:
- ՀՀ Արմավիրի մարզում գրանցված ջերմաստիճանի, ցրտահարության բացակայության և հակակարկտային կայանների աշխատանքի հետ կապված տեղեկատվությամբ հանդես եկավ Արթուր Այվազյանը, որոնք ընդունվեցին ի գիտություն: Վերջինս զեկուցեց նաև «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության» ծրագրի շրջանակներում կայանալիք քննարկման մասին, որը չառարկվեց:
- Քննարկվեց նաև ներքին հեռախոսակապերի հետ տարվող աշխատանքների և ժամկետների հետ կապված հարցերը, որի առնչությամբ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Արայիկ Հակոբյանը նշեց, որ աշխատանքներն ընքացքի մեջ են և նախատեսվում է գործընթացն ավարտել մինչև սույն թվականի ապրիլի 20–ը:

- **ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից** անդրադարձ եղավ «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լենուղի բնակավայրի 4-րդ փողոցի N 1 7 N3 բազմաբնակարան վթարային շենքերի բնակարաններում փաստացի բնակվող, տիրապետող կամ օգտագործող բնակիչների բնակարանային պայմանների բարելավման նպատակով ֆինանսական աջակցություն տրամադրելու կարգը հաստատելու և «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, փոփոխություն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ Կառավարության 340-Ն որոշմանը, համաձայն որի՝ Արմավիրի մարզի, Արմավիր համայնքի Լենուղի բնակավայրի 4-րդ փողոցի 1 և 3 բազմաբնակարան վթարային շենքերի բնակարաններում փաստացի բնակվող բնակիչներին բնակարանային պայմանների բարելավման նպատակով մարզպետի աշխատակազմին հատկացվել է 182.500.0 ՀՀ դրամ, որն ուղղվելու է շահառուների բնակարանների ձեռքբերման համար վկայագրերի միջոցով ֆինանսական աջակցության տրամադրմանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մարզպետի աշխատակազմին հանձնարարվել է որոշմամբ նախատեսված աշխատանքների կատարման ապահովումը, ուստի ՀՀ Արմավիրի մարզպետի հանձնարարությամբ աշխատակազմի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանին հանձնարարվեց համակարգել նշված աշխատանքները և պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն:

- **ՀՀ Արմավիրի Մարզպետի կողմից հանձնարարական տրվեց** նաև ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության **պետ Գոռ Հովհաննիսյանին՝ առաջիկա**

գործակարգավարական խորհրդակցության ընթացքում զեկուցել Մեծամոր համայնքի իրավական հսկողության կազմակերպման աշխատանքների մասին:

Ամփոփելով քննարկումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Արգիշտի Մեխակյանը խորհրդակցությունը հայտարարեց ավարտված:

2025-03-28 14:16:05 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

Արձանագրող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի անձնակազմի կառավարման,
փաստաթղթաշրջանառության և հասարակայնության
հետ կապերի վարչության փաստաթղթաշրջանառության
բաժնի պետ՝ Աննա Միքայելյան